ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

05.11.2014թ.
232-ի 5

Գավառ համայնքի ղեկավար
պարոն Գուրգեն Մարտիրոսյանին

## Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Մարտիրոսյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Գավառի քաղաքային բյուջեից Հացառատ թաղամասի բնակիչներից ու՞մ եւ ինչի՞ համար է տրամադրվել 300 հազար դրամ դրամական օգնությունը:
2. Գավառի Հրապարակի վերակառուցումը ի՞նչ հիմքով է իրականացնում Գավառի քաղաքապետարանը, կառավարության տրամադրած 20 միլիոն դրամը ինչպե՞ս է ծախսվել, ո՞ր կազմակերպությունն է իրականացրել կամ իրականացնում հրապարակի շինարարությունը:
3. Խնդրում եմ տրամադրել Գավառագետի մաքրման համար 2010, 2011, 2013, 2014 թվականներին համայնքային բյուջեից տրամադրված գումարների վճարման հանձնարարագրերը, Կատարողական ակտերը:

"Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան